

ԳՈՐԳԻՆԻ ՀՈՎԵՐՈՒՄ

ՊՈՒՇԿԻՆԻ ԵՐԿԵՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻՆ
ՔԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին երկը, որ դեռևս մեծ բանաստեղծի կենդանության օրոք թարգմանվել էր հայերեն, եղել է հայտնի «Բախչիսարայի շատրվանը»։ Այդ պոեմը Պուշկինի լավագույն երկերից մեկն է։ Բայց Պուշկինի հայ առաջին թարգմանչին հուզել է, ոչ միայն պոեմի գեղարվեստական մեծ հմայքը, այլ նաև նրա սոցիալական խոր բովանդակությունը։

Պուշկինի երկերի հայերեն առաջին թարգմանությունների մասին մենք տեղեկանում ենք «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа» — («Հայ ժողովրդի պատմության տեսությունը վերաբերող վավերագրերի ժողովածու»-ից)։ Այդ ժողովածուները հրապարակվում էին Մոսկվայում 1833 թվից սկսած և բավականին հետաքրքրություն էին առաջացրել ուսումնասիրական մեջ դեպի հայ ժողովուրդն ու նրա հարուստ կուլտուրան։ Այդ ժողովածուների երրորդ հատորում հետևյալն ենք կարդում Պուշկինի առաջին հայերեն թարգմանությունների և նրանց թարգմանչի մասին. «Մկրտիչ էմին, արևելյան լեզուների հայկական ճեմարանի սան, ուղարկված այդ ճեմարանը Հնդկաստանի Գալկաթա քաղաքից այս ինստիտուտը՝ կրթություն ստանալու համար, ուսերենից հայերեն շափածո թարգմանել է Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» և «Կովկասյան գերին» երկերը։ Այս թարգմանությունները շուտով լույս կտեսնեն և այն ժամանակ Շատրվանի և Գերյալի երգիչը հայտնի կդառնա հայերով բնակված Ասիայի զանազան երկրներում» (էջ 220)։

Անցյալ դարի 30-ական թվականներին ավարտելով իշխանի ճեմարանը և ապա նույն այդ ճեմարանում լեզվի ու գրականության դասախոս մնալով՝ Մկրտիչ էմինը հսկայական աշխատանք է կատարել ուսումնասիրական կապերի ամրապնդման գործում։ Նա ուսերեն լեզվով հրատարակել է բազմաթիվ աշխատություններ՝ նվիրված հայ ժողովրդի պատմությանը, գրականությանը, ինչպես և ուսումնական պատմական ու կուլտուրական կապերին։ Մկրտիչ էմինը ուսական կուլտուրայի առաջին պրոպագանդիստներից մեկն էր հայ իրականության մեջ։ Որպես դասախոս, էմինը հայ ինտելիգենցիայի մի ամբողջ սերնդի մեջ առաջացրել է ջերմ հետաքրքրություն ու անսահման սեր դեպի ուսումնասիրական կուլտուրան ու գրականությունը, դեպի ժամանակի մեծ գրողները և նրանց հանճարեղ ստեղծագործությունները։

Էմինի աշակերտներից մեկը, նշանավոր բանաստեղծ Ռաֆայել Պատկանյանն իր հուշերում էմինի մասին գրում է. «Պուշկինի և Լերմոնտովի գրվածքն առաջին անգամ մեզ ծանոթացուց էմինը. շատ անգամ, հենց յուր դասի միջոցին, ձեռքն առնում էր նոցա շարադրությունները և կարգում էր մեզ համար, և այդ կերպ մեր մեջ սեր և ճաշակ էր ձգում այդ և ուրիշ ուս

հեղինակների մասին: Եվ այդ իսկ էր պատճառը, որ պրոֆեսոր էմիլի աշակերտների մեջ բավականին շատ թվով բանաստեղծական ոգով և ճաշակով երիտասարդներ երևան եկան, ինչպես՝ Ասկարյանը, Փափազյանը, Միրիմանյանը, Դոդոխյանը, Շահազիզյանը և այլն»¹:

Այդ տարիներին ռուս գրական ու հասարակական շրջաններում նույնպես նշանակալից հետաքրքրություն կար աբալի Հայաստանը, որը ռուսական հերոսական զորքերի շնորհիվ նոր էր ազատագրվել պարսկական դարավոր կեղեքումներից: Ռուս-պարսկական պատերազմի տարիներին Հայաստան էին այցելել Պուշկինը, Գրիբոեդովը, Մաուրյանսկին, Դավիդովը և շատ ուրիշները: Ռուս մամուլի էջերում հաճախակի երևում էին Հայաստանին վերաբերող պատմական ու գրական բազմաթիվ նյութեր:

Երբ լույս տեսան «Հայ ժողովրդի պատմության տեսությանը վերաբերող վավերագրերի ժողովածու»-ների հատորները, Պուշկինն այդ ժամանակ տպագրության էր պատրաստում իր «Ծանապարհորդություն դեպի Արզրում» աշխատությունը: Ինչպես հայտնի է, մինչ այդ Պուշկինը ռուսերեն ու օտար լեզուներով մեծ քանակությամբ գրականություն էր կարդացել Կովկասի ու նրա պատմության մասին: Կասկածից դուրս է, որ նրա հայացքից չէին կարող վրիպած լինել այդ մեծածավալ ժողովածուի հատորները, որոնց մեջ հիշատակված էր նաև նրա երկերի հայերեն թարգմանությունների մասին:

Հայոց պատմությունն առհասարակ հանգամանորեն զբաղեցրել է ինչպես ռուս մի շարք գրողների, նույնպես և Պուշկինին: Նա նյութեր էր հավաքել հայ ժողովրդի հեռավոր անցյալից մի պոեմ գրելու համար: Նրա ձեռագիր սևագրությունների մեջ մնացել են հայոց պատմության վերաբերյալ աշխարհում որոշ գործեր: Ռուս գրականագետներից մեկը, ուսումնասիրելով Պուշկինի այդ ձեռագրերը, նրանց մասին գրել է. «Շատ քչերին է հայտնի այժմ, որ Պուշկինի շավարտված երկասիրությունների մեջ կա երկու բանաստեղծություն, որոնց մեջ գործողությունը պետք է տեղի ունենար Հայաստանում: Զենզեվեյ (անհաջող ստեղծված անուն է, իհարկե) թագավորի պալատում: Առաջին բանաստեղծության մեջ Պուշկինը կամեցել է նկարագրել հայ թագավորի կռիվը յուր թշնամիների դեմ, որոնք այրել էին նրա երկրի մեջ դաշտերն ու գյուղերը, և ապա նկարագրել նրա վրաններում տեղի ունեցող շքեղ խնջույքը, ուր հավաքվում են «զորավոր թագավորներ, թագուհիներ, իշխանուհիներ և դյուցազններ», որպեսզի Զենզեվեյի մոտ մնան 20 օր շարունակ: Երկրորդ բանաստեղծությունը նվիրված պետք է լիներ հայոց թագավորի աղջկան, որի մասին բանաստեղծն ասում է, որ նա «գեղեցիկ էր ինչպես մայիսյան շուշան և կայտառ՝ ինչպես կովկասյան լեռների եղնիկը»: Գեղեցկուհու ձեռքը խնդրում են շատ իշխաններ ու կտրիճներ, բայց ծեր թագավորը պետք է որոշի, թե որին է կամենում յուր փեսան և դաշնակիցը դաժնել»¹:

Այսպիսով, ինչպես վկայում են փաստերը, ոչ միայն իր ժամանակի հայ ինտելիգենցիան է ջերմ հետաքրքրություն հանգես բերել դեպի Պուշկինի ստեղծագործությունները, թարգմանել նրանցից սքանչելի նմուշներ, այլև իսբը մեծ բանաստեղծը փոխադարձաբար հետաքրքրվել, ուսումնասիրել է

¹ «Լ. էմիլի երկասիրություններ», Մոսկվա, 1898 թ., էջ 210.:

² „Пушкинский сборник“ СПб. 1899 г.

հայ ժողովրդի կյանքը, մեծ իրադարձություններով լի նրա պատմությունը՝ իր ապագա ստեղծագործությունների համար:

Պուշկինի շարանենգ սպանությունը ղրկեց մեզ ունենալու մեծ բանաստեղծի հայ կյանքից վերցրած այդ ստեղծագործությունները. նրա արխիվում մնացած սևագրությունների ուսումնասիրությունը վկայում է այն մեծ հետաքրքրության մասին, որ ուսա ժողովրդի հանճարեղ բանաստեղծը հանդես է բերել դեպի Ռուսաստանի մյուս ժողովուրդների կյանքը, այդ թվում նաև դեպի հայ ժողովրդի կյանքը:

Պուշկինի ողբերգական մահը մեծ արձագանք գտավ Անդրկովկասում: Անդրկովկասի առաջավոր ինտելիգենցիան, որ լավ ծանոթ էր բանաստեղծին ու նրա հանճարեղ ստեղծագործություններին և հատկապես Կովկասին նվիրված նրա մարգարտաշար տողերին, մի առանձին կսկիծով ընդունեց Պուշկինի մահվան բոթը: Անդրկովկասի ժողովուրդների այդ անսահման վիշտը ժամանակին բանաստեղծական հուզիչ տողերով արտահայտեց Ադրբեջանական ժողովրդի հանճարեղ զավակ Միրզա Ֆաթալի Ախունդովը: «Պուշկինի մահը» բանաստեղծության մեջ Ախունդովը գրել է. «Բախշիսարայի շատրվանը գարնան զեփյուռի հետ ուղարկում է քեզ քո մի զույգ վարդերի անուշ բուրմունքը»:

«Մի զույգ վարդեր» ասելով Ախունդովը ակնարկում է Պուշկինի «Բախշիսարայի շատրվանը» պոեմը և հատկապես «Բախշիսարայի պալատի շատրվանին» բանաստեղծության հետևյալ տողերը.

Фонтан любви, фонтан живой,
Принес я в дар тебе две розы.
Люблю немолчный говор твой
И поэтические слезы.²

Պատահական չէ, որ Ախունդովը «Պուշկինի մահը» բանաստեղծության մեջ հատկապես հիշատակում է «Բախշիսարայի շատրվանը»:

Օտար զավթիչների վայրագ արշավանքները բազմիցս ոտնահարել են Անդրկովկասի ժողովուրդների գեղեցիկ երկիրը, ավերել գյուղերն ու քաղաքները, կոտորել տղամարդկանց ու երեխաներին, առևանգել ու փախցրել Կովկասի գեղեցիկ աղջիկներին: Զավթիչների այդ ապաստանությունները Պուշկինը նկարագրում է զարմանալի ռեալիստական գույներով: Այդ տեսակետից բնորոշ է հատկապես Գիրեյ խանի դաժան կերպարը: Բելինսկին խոսելով Պուշկինի «Բախշիսարայի շատրվանը» պոեմի մասին, գրել է, որ Գիրեյ խանը «վայրի հոգու» տեր մարդ է, որ նա «թունակալ ավազակ» է, «բարբարոս է», որ նրա «համար կանանց հետ փոխադարձ վերաբերմունքը երբեք չի եղել անհրաժեշտ պայման իսկական հաճույքի»:³ Պուշկինը նկարագրում է, թե ինչպիսի ահավոր բարբարոսություններով թշնամու հորդանները փախցնում էին դեռատի աղջիկներին, ինչպես տանջում նրանց իրենց հարեմներում:

¹ «Пушкин. Временник», № 2, 1936 г.

² «Շատրվան սիրո, շատրվան զվարթ,
Քեզ ձոն եմ բերել հիմա երկու վարդ,
Սիրում եմ խոսուն զույգըդ այնքան,
Եվ արցունքըդ ջինջ ու պոետական»:

³ В. Г. Белинский—Собрание сочинений в трёх томах, том III, стр. 444. Москва—1948 г.

Սոցիալական այդ շարժառիթներն էին ահա, որ թարգմանություն համար դրդել էին Պուլկինի առաջին հայ թարգմանչին հատկապես ընտրելու «Բախչիսարայի շատրվանը»:

Մկրտիչ էմինի սաներից մեկը՝ Հ. Համազասպյանը 1843 թվին Պուլկինից թարգմանում է 10 բանաստեղծություն և ուսու ալ բանաստեղծներից կատարած իր թարգմանությունների հետ մեկտեղ առանձին գրքով հրատարակում է Մոսկվայում: Տարեցտարի լայն ծավալ է ստանում Պուլկինի երկերի թարգմանությունների գործը: Բայց բնորոշ է, որ այդ շրջանում մեծ մասամբ թարգմանվում էին Պուլկինի մանր բանաստեղծությունները, իսկ նրա ծավալուն գործերից, հատկապես պոեմներից, միայն առանձին հատվածներ: Ներկա դեպքում մեզ զբաղեցնում է Պուլկինի «Բախչիսարայի շատրվանի» հայերեն թարգմանությունների հարցը:

Մկրտիչ էմինից հետո, «Բախչիսարայի շատրվանից» մի հատված, ուսներեն բնագրի հետ մեկտեղ, թարգմանաբար մեջ է բերել իր «Պատմություն հրիմու» արժեքավոր աշխատության մեջ Հովհաննես Տեր-Աբրահամյանը: Այդ աշխատությունը լույս է տեսել 1865 թվին: Բնորոշ է, որ թարգմանված հատվածը վերաբերում է դարձյալ թշնամիների վայրագություններին:

«Բախչիսարայի շատրվանի» մի նոր թարգմանության մենք հանդիպում ենք 1873 թվին, Թեոդոսիայում հրատարակվող «Դաստիարակ» պատկերազարդ ամսագրում: Խմբագրությունն այդ թարգմանության տպագրության առթիվ գրում է. «Ռուսաց աշխարհաբարոզ և առաջին գերահռչակ քնարերգակ բանաստեղծ Ադեքսանդր Փուլքինի անվանի գրվածքներեն մեկն է «Բախչիսարայի շատրվանը» որո թարգմանությունը կղենք այստեղ ի վայելս մեր բանասիրաց»¹ Հետաքրքիր է նաև թարգմանության վերնագիրը — «Փուլքինի Պաղլեսարայի աղբյուրը»: Պուլկինից կատարված նախորդ թարգմանությունների համեմատությամբ լեզվի և պատկերավորության տեսակետից այս թարգմանությունը մի զգալի քայլ էր դեպի առաջ: Բայց և այնպես այդ բոլորը դեռ չէին տալիս Պուլկինի պոեմի գեղարվեստական գունեղության ու մտքի խորության ամբողջ հարստությունը:

90-ական թվականների վերջերին «Բախչիսարայի շատրվանը» նախաձեռնել էր թարգմանելու մեր անվանի բանաստեղծ Ալեքսանդր Մատուրյանը: Ռուս լեզվին ու գրականությանը լավ ծանոթ Մատուրյանի սքանչելի թարգմանությունները վաղուց արդեն հայտնի էին հայ հասարակությանը, որպես թարգմանական գրականության լավագույն նմուշներ: «Բախչիսարայի շատրվանից» թարգմանած մի հատված նա զետեղում է իր «Ռուս բանաստեղծներ» ժողովածուի առաջին գրքում: Այդ թարգմանության թե լեզվի պարզությունն ու մելոդիան, թե բանաստեղծական պատկերների հարազատությունը և գունեղությունը, թե ուրիշ հարստությունն ու սահունությունը րստեղծում են Պուլկինի սքանչելի պոեմայի ներգործող իսկական տպավորությունը:

Եղել են «Բախչիսարայի շատրվանի» թարգմանության այլ փորձեր ևս, բայց դրանք մի առանձին որակ չեն կազմում, այդ պատճառով էլ մենք չենք անդրադառնում նրանց:

Սովետական ժամանակաշրջանում ստեղծվեցին Պուլկինի երկերի թարգ-

մանություն համար սքանչելի պայմաններ, Թարգմանվեցին հանճարեղ բանաստեղծի համարյա բոլոր նշանավոր գործերը, այդ թվում նաև «Բախչիսարայի շատրվանը»։ Պուշկինի ողբերգական մահվան հարյուրամյակի առթիվ բանաստեղծ Ս. Վահունին հայ ընթերցողին ներկայացրեց «Բախչիսարայի շատրվանի» նոր, ամբողջական ու հաջող թարգմանությունը։

Ռուսական քննադատական միտքը, ի դեմս Բելինսկու, Ջերնիշևսկու, Դորրոյլոֆովի, բավականին բարձր է գնահատել Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը»։ Հայ ինտելիգենցիայի շրջանում նույնպես առանձին սիրով է ընդունվել այդ պոեման։ Բավական է նշել, որ դա առաջին երկն էր, որ մեծ բանաստեղծի կենդանության օրերին թարգմանվեց հայերեն։

Հուշակավոր նկարիչ Վարդգես Սուրենյանն անցյալ դարի 90-ական թվականներին պատկերազարդել է «Բախչիսարայի շատրվանը»։ Դա հայ նկարչության խոշոր նվաճումն էր, որ ուս հասարակության կողմից գնահատվեց ըստ արժանիության, որպես Պուշկինի այդ պոեմի չգերազանցված պատկերազարդում։ «Բախչիսարայի շատրվանը» ներշնչման աղբյուր է հանդիսացել նաև մեծատաղանդ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյովի համար, որն իր սքանչելի երգերից մեկը գրել է «Բախչիսարայի շատրվանի» տեքստի հիման վրա։

Դեռևս մեծ բանաստեղծի կենդանության օրոք հալ երիտասարդությունն իր մայրենի լեզվով լսեց Պուշկինի պոեմի բյուրեղ հնչյունները, հիացավ նրա կախարդիչ պատկերներով, հուզականությամբ և երաժշտականությամբ։

Ավելի քան մի դար է անցել այն օրից, երբ առաջին անգամ Պուշկինի հանճարեղ երկերը թարգմանվեցին հայերեն։ Այսօր, սովետական հայ ընթերցողը հպարտությամբ կարող է նշել, որ մեծ բանաստեղծի ստեղծագործությունների համարյա լրիվ թարգմանություններն ունի իր մայրենի լեզվով։

Պուշկինի բանաստեղծական հանճարը ոգեշնչման անսպառ աղբյուր է եղել միշտ հայ գրականության վերելքի ճանապարհին։ Նա բոլոր ժողովուրդների, ինչպես և հայ ժողովրդի ամենասիրված հեղինակներից մեկն է։

Гурген Овнан

О первом переводе произведений Пушкина на армянский язык

(Р е з ю м е)

Первое произведение, которое при жизни гениального поэта перевели на армянский язык, была поэма «Бахчисарайский фонтан». Об этом переводе упоминается в сборниках «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа». Эти сборники издавались в Москве начиная с 1833 года и возбудили в русском обществе огромный интерес к жизни армянского народа и его культуре. В третьем томе «Собрания актов» мы читаем следующее: «Никита Эмин, воспитанник Московского Армянского Лазеревых Института Восточных языков, присланный в сей Институт для образования из Индии, из Калькутты, перевел с русского

на армянский в стихах: Бахчисарайский фонтан и Кавказского пленника, соч. А. Пушкина. Переводы сии вскоре будут изданы и тогда певец Фонтана и Пленника будет известен в разных странах Азии, населенных армянами».

Эмин был одним из первых, который усердно знакомил армянское общество с русской культурой и литературой.

В период, когда выходили сборники «Собрание актов», Пушкин подготовил к изданию «Путешествие в Арзрум». Известно, что он на русском и на иностранных языках читал множество книг о Закавказье. Сборники «Собрание актов», где упоминаются и о переводах произведений Пушкина на армянский язык, не могли ускользнуть от внимания поэта, тем более, что в то время он собирал материалы из истории армянского народа, для своей новой поэмы. В черновых рукописях Пушкина сохранились незаконченные отрывки этой поэмы.

В дальнейшем отрывок из поэмы «Бахчисарайский фонтан» перевел на армянский язык и поместил в своей книге «История Крыма» Ованнес Тер-Абрамян. Книга эта была издана в 1865 году. В журнале «Дастирак» в 1873 году был напечатан новый перевод «Бахчисарайского фонтана». В 90-х годах выдающийся армянский поэт Александр Цатурян, известный своими замечательными переводами произведений русских поэтов, предпринял новый перевод «Бахчисарайского фонтана». В смысле яркости и образности, перевод Цатуряна пользовался исключительным успехом. Были и другие переводы «Бахчисарайского фонтана».

Огромный интерес к поэме «Бахчисарайский фонтан» проявили и армянские художники и композиторы. Так, известный художник Вардкес Суренян в 1898 году иллюстрировал «Бахчисарайский фонтан». Эта работа Суреняна получила высокую оценку в русском художественном мире. Знаменитый композитор Александр Спендиаров одну из своих замечательных песен написал на текст «Бахчисарайского фонтана».

Такой большой интерес к поэме «Бахчисарайский фонтан» не случаен. Тяжелые последствия татарских нашествий, так правдиво и гениально показанные в этой поэме, не раз испытывал армянский народ. Вот эти социальные мотивы, вероятно, и побудили первого армянского переводчика Пушкина остановиться именно на «Бахчисарайском фонтане».